



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«11» հունիսի 2019թ.

№ 2/3385-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

**Գ.ԳԻՇՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 39/2019 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները խախտելու՝ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևելյան մաքսատուն-վարչության Այրում-Զիլիզայի մաքսային կետ-բաժնի 2-րդ բաժանմունքի ավագ մաքսային տեսուչ Գագիկ Սանդրոյի Գիշյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:
2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին – սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Recoverable Signature

X

ՌԱՖԻԿ ՄԱՇԱԴՅԱՆ

Signed by: MASHADYAN RAFIK 3304710108

Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ

